ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2012 թվականի N 807-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՆԴՇԱՖՏԻ ՄՐՑԱՆԱԿԻ՝ ԴԻՊԼՈՄԻ ԵՎ ԱՐՁԱՆԻԿԻ ԷՍՔԻԶՆ ՈՒ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 16-ի N 164-Ն որոշման 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի մրցանակի (այսուհետ՝ լանդշաֆտի մրցանակ)՝

1) դիպլոմի էսքիզն ու նկարագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) արձանիկի էսքիզն ու նկարագիրը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին՝ Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի ձևավորման գործընթացի ժամանակ նախատեսել համապատասխան միջոցներ՝ լանդշաֆտի մրցանակի արձանիկի պատրաստման և դիպլոմների տպագրման համար (3-ական օրինակով):

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2012 թ. հուլիսի 2
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2012 թվականի
հունիսի 28-ի N 807-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՆԴՇԱՖՏԻ ՄՐՑԱՆԱԿԻ՝ ԴԻՊԼՈՄԻ ԷՍՔԻԶՆ ՈՒ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի մրցանակի դիպլոմի ֆոնը մոխրագույն է (Gray 25 տոկոս), ունի որոշակի ֆակտուրա, որի վրա ձախ կողմում պատկերված են «Աստվածային պարույրը», գույնը՝ Gray 50 տոկոս, և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սխտորաշեն գյուղի մոտակայքում գտնվող ավելի քան 2000 տարեկան արևելյան սոսին (չինար): Աջ հատվածում՝ հայերենով և անգլերենով գրված է Հայաստանի Հանրապետության (ArTarumianIshxan, 14B) Լանդշաֆտի մրցանակ (ArTarumianIshxan, 24B), Դիպլոմ (ArTarumianIshxan, 48B)՝ համաձայն ձևի:

2. Դիպլոմը նախատեսված է տպագրել A4 ֆորմատի ստվարաթղթի վրա:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**

Ձև
Դիպլոմի էսքիզ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԱՆԴՇԱՖՏԻ ՄՐՑԱՆԱԿ

Դ Ի Պ Լ Ո Մ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թվականի
հունիսի 28-ի N 807-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՆԴՇԱՖՏԻ ՄՐՑԱՆԱԿԻ՝ ԱՐՁԱՆԻԿԻ ԷՍՔԻԶՆ ՈՒ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի մրցանակի արձանիկը խորհրդանշում է «Աստվածային

համաչափության» կամ ոսկեհատման գաղափարը՝ ներդաշնակության և հավերժության հասկացությունների մարմնավորմամբ: Համամասնության նշված կանոններով կառուցված արձանիկի պարույրաձև եզրագիծը (բնական միջավայրի խորհրդանիշը)՝ դրան ներգծված բեկյալ գծով (ձեռակերտ միջավայրի խորհրդանիշը) արտացոլում են մարդ-բնություն փոխադարձ կապակցվածությունն ու միմյանցից կախվածությունը:

2. Արձանիկը նախատեսված է պատրաստել 13 մմ հաստություն ունեցող թափանցիկ բյուրեղապակուց, որի պարույրի վերևի եզրագծով և ոսկեգույն մետաղից պատրաստված բեկյալ գծի միջև մակերեսը 7.0 մմ հաստությամբ ուռուցիկ, որոշակի մշակվածք (ֆակտուրա) ունեցող ոսկեգույն բյուրեղապակուց է:

3. Արձանիկի միջնամասը նախատեսված է պատրաստել կաթնագույն 5.0 մմ հաստություն ունեցող բյուրեղապակուց, որը մասնահատված է պարույրի կառուցման գծերին համապատասխան: Կաթնագույն բյուրեղապակու եզրերը մասնահատումների մասում տաշված են 60^0 -ով:

4. Արձանիկի չափերն են՝ երկարությունը՝ 210 մմ, բարձրությունը՝ 130 մմ, հաստությունը՝ 20 մմ:

5. Արձանիկի ներքևի աջ հատվածում գրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՆԴՇԱՖՏԻ ՄՐՑԱՆԱԿ»: «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը գրված են 0.4 չափի «ArTarumianIshxan», իսկ «Լանդշաֆտի մրցանակ» բառերը՝ 0.8 չափի «ArTarumianIshxan» տառատեսակով: Տառերը ոսկեգույն մետաղից են:

6. Արձանիկի հակառակ երեսը հարթ է, թափանցիկ բյուրեղապակուց:

7. Պատվանդանն ունի 210 մմ երկարություն, 50 մմ լայնություն, 10 մմ բարձրություն: Նախատեսված է պատրաստել կաթնագույն բյուրեղապակուց՝ համաձայն NN 1, 2 և 3 ձևերի:

Ձև N 1



Ձև N 2



Ձև N 3

Յև N 3

Արձանիկի Էսքիզ

Լանդշաֆտի մրցանակի արձանիկի տեսքը դիմացից



Տեսքը կողքից



Տեսքը վերևից